ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս,

Մասնակցությամբ՝ «ՍԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Կիրակոսյանի (լիազորագիր՝ տրված 10.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2021թ. թիվ 26/26/1411-2021 գրությամբ «ՍԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 01.02.2021թ. թիվ 3//3701-21 գրության հիման վրա 04.02.2021թ. թիվ 26/26/1411-2021 գրությամբ նախաձեռնել է «ՍԻՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՍԻՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/37 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ. կնքվել է Պայմանագիր, որի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 20.12.2020թ., մինչդեռ համաձայնագիրը Պատվիրատուի կողմից ուղարկվել է 10.12.2020թ., որի ստորագրման պայմաններում Ընկերությունը չէր կարողանա մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, քանի որ ապրանքի մատակարարման ժամկետը արդեն իսկ լրացած կլիներ:

3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 01.02.2021թ. թիվ 3//3701-21 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՍԻՍ» ՍՊԸ-ն 11-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, որի արդյունքում վերջինիս հետ 16.10.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով պայմանագիրը: Այնուհետև՝ ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո՝ 10.12.2020թ., «ՍԻՍ» ՍՊԸ-ին առաջարկվել է կնքել համաձայնագիր, սակայն վերջինս չի ներկայացրել համաձայնագիրը սահմանված ժամկետում, ինչի արդյունքում գնման ընթացակարգը տվյալ չափաբաժնի մասով չի կայացել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ ուղարկվում է «ՍԻՍ» ՍՊԸ-ի հետ կնքված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով պայմանագրի կատարմանը վերաբերող փաստաթղթերը՝ Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/37 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:50 հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ «ՍԻՍ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի 2.1-րդ կետի 2.1.1-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

3. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.:

4. Պատվիրատուն 10.12.2020թ. Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկել Պայմանագրի շրջանակներում կնքվելիք համաձայնագիրը՝ խնդրելով ստորագրել և ներկայացնել Նալբանդյան 130 հասցեով:

5. «ՍԻՍ» ՍՊԸ-ին ուղղված 29.01.2021թ. թիվ 27/79 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը. «ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16

հոկտեմբերի 2020թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով չհրկիզվող պահարանների ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ չի ստորագրել և սահմանված ժամկետում չի ներկայացրել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 1-ը և չի մատակարարել 19 հատ չհրկիզվող պահարանները, որի ընդհանուր գինը կազմում է 1 600 000 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում, Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ. կնքված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով Պայմանագիրը»:

6.Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 29.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2021թ. թիվ 26/26/1411-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 01.02.2021թ. թիվ 3//3701-21 գրությունը և կից փաստաթղթերը, ՍՑ-ՆԳ-2020/37 ընթացակարգի շրջանակներում Ընկերության հայտնած դիրքորոշումը և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված</u>*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***<u>պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*** Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրի 8-րդ կետերի 8.1-րդ ենթակետի համաձայն՝ ***պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:*** Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ. համաձայնագրերի կնքման միջոցով:

Պայմանագրի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետի համաձայն՝ ***պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:***

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ «ՍԻՍ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1-րդ կետի 2.1.1-րդ ենթակետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ.***:

Պատվիրատուն 10.12.2020թ. Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկել Պայմանագրի շրջանակներում կնքվելիք համաձայնագիրը՝ խնդրելով ստորագրել և ներկայացնել Նալբանդյան 130 հասցեով:

«ՍԻՍ» ՍՊԸ-ին ուղղված 29.01.2021թ. թիվ 27/79 ծանուցմամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է հետևյալը. «ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16 հոկտեմբերի 2020թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով չհրկիզվող պահարանների ձեռքբերման գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել, մասնավորապես՝ չի ստորագրել և սահմանված ժամկետում չի ներկայացրել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 1-ը և չի մատակարարել 19 հատ չհրկիզվող պահարանները, որի ընդհանուր գինը կազմում է 1 600 000 ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում, Պայմանագրի նույն կետի բ) ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ. կնքված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով Պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 29.01.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետով սահմանվել է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>15 օրից ավելի</u>:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն 29.01.2021թ. Տեղեկագրում հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծելու մասին ծանուցման՝ Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է այն հիմքով, որ Ընկերությունը չի ստորագրել և սահմանված ժամկետում չի ներկայացրել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11» ծածկագրով պայմանագրի համաձայնագիր 1-ը և չի մատակարարել 19 հատ չհրկիզվող պահարանները:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ ***<u>եթե պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա</u>***, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ***<u>ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով</u>***: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: ***Ընդ որում, <u>պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում</u>, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին <u>ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:</u> Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է.***

Վերը նշված իրավակարգավորման համաձայն՝ ***պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում***:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Պայմանագրի շրջանակներում կնքվելիք համաձայնագիրը՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ, Ընկերության էլեկտրոնային հասցեին է ուղարկել ***10.12.2020թ.***՝ խնդրելով ստորագրել և ներկայացնել Նալբանդյան 130 հասցեով:

Մինչդեռ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ***.:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի վերաբերյալ վերոհիշյալ դրույթը՝ գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «ՍԻՍ» ՍՊԸ-ի կողմից համաձայնագիր չկնքելու և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետի խախտման փաստը, քանի որ Ընկերությունը համաձայնագիրը կնքելու վերաբերյալ ծանուցվել է 10.12.2020թ., որից հաշված 15 աշխատանքային օրը լրանում է ***30.12.2020թ.,*** մինչդեռ համաձայն Պայմանագրի՝ որպես ապրանքի մատակարարման առավելագույն ժամկետ սահմանվել է ***20.12.2020թ.,*** այսինքն՝ ստացվում է, որ մինչ Ընկերության կողմից Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված 15 աշխատանքային օրվա ընթացքում համաձայնագիրը ստորագրելը, Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման առավելագույն ժամկետն արդեն իսկ լրացած կլիներ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 19 հատ չհրկիզվող պահարանները չմատակարարելուն, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օր հետո, բայց ոչ ուշ, քան 20.12.2020թ***., ընդ որում՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել

պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Այսպիսով՝ վերը նշված հանգամանքներով պայմանավորված՝ գտնում եմ, որ «ՍԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2021թ. թիվ 26/26/1411-2021 գրությամբ «ՍԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**